

**ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 12/10  
27 փետրվարի 2018թ.**

Քննարկվեց Ա/Ձ Մանվել Հովհաննիսյանի բողոքը լրացուցիչ առաջադրված պարտավորությունները վերանայելու վերաբերյալ:

**Ա/Ձ Մանվել Հովհաննիսյանի բողոքում բերված փաստարկները.**

2017թ. դեկտեմբերի 22-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահին դիմում է գրվել հաշվարկված հարկային պարտավորությունները չեղարկելու խնդրանքով, քանի որ ինչպես նշվել է փաստացի որևէ գործունեություն չի իրականացվել:

Նշված դիմումում ներկայացված հիմնավորումները հիմք ընդունելով՝ հարկային մարմինը կարճել է շրջանառության հարկի հաշվարկը սահմանված ժամկետում չներկայացնելու մասով վարչական վարույթը, սակայն հարկային մարմնի բազայում հաշվարկված հարկային պարտավորությունները դեռ առկա են:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Մանվել Հովհաննիսյանը խնդրում է չեղյալ համարել հարկային մարմնի կողմից հաշվարկված հարկային պարտավորությունները:

**ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնա-  
ժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ Մանվել Հովհաննիսյանը 25.04.2017թ. գրանցվել է որպես անհատ ձեռնակատեր: 27.04.2017թ. Ա/Ձ Մանվել Հովհաննիսյանի կողմից ներկայացվել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, սակայն որևէ գործունեություն չի իրականացվել և շրջանառության հարկի հաշվարկներ չի ներկայացրել: 11.12.2017թ. նրա կողմից ներկայացվել է գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու վերաբերյալ հայտարարություն: Արդյունքում, ղեկավարվելով «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթներով 2017թ. ապրիլից մինչև դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածի համար հաշվարկվել է եկամտային հարկ: 27.02.2018թ. դրությամբ Ա/Ձ Մանվել Հովհաննիսյանի պարտավորությունները կազմում են ընդամենը 57.696 դրամ, այդ թվում՝ հարկ 45.000 դրամ, տույժ 12.696 դրամ:

**Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.**

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն, «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված հաստատագրված վճարներով հարկվող և (կամ) «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի հավելված 7-ի ցանկում ընդգրկված և (կամ) «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքով շրջանառության հարկով հարկվող գործունեության տեսակների մասով հարկ վճարողները եկամտային հարկը հաշվարկում և վճարում են ամսական 5 հազար դրամի չափով՝ յուրաքանչյուր ամսվա համար մինչև տվյալ ամսվան հաջորդող

ամսվա 20-ը (ներառյալ), որը նրանց համար համարվում է եկամտային հարկի գծով վերջնական հարկային պարտավորություն:

Այսինքն, եկամտային հարկի գծով պարտավորություն առաջանում է, եթե անհատ ձեռնարկատերը հարկային մարմնում առկա տեղեկատվության համաձայն տվյալ հարկային տարվա ընթացքում փաստացի զբաղվել է վերը նշված օրենքներով սահմանված հարկվող գործունեության տեսակներով (ստացել է արտոնագիր՝ արտոնագրի գործողության ամիսների համար, ներկայացրել է ելակետային տվյալներ՝ հաստատագրված վճարով հարկվող ժամանակահատվածի համար, ներկայացրել է շրջանառության հարկի հաշվարկներ՝ եռամսյակային հաշվարկներում ընդգրկված ամիսների համար):

Քննարկվող դեպքում, քանի որ հարկային մարմնում առկա տեղեկությունների համաձայն Ա/Ձ Մանվել Հովհաննիսյանի կողմից փաստացի գործունեություն չի իրականացվել, շրջանառության հարկի հաշվարկներ չի ներկայացվել, հետևապես «եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված դրույթը կիրառելի չէ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Ա/Ձ Մանվել Հովհաննիսյանի բողոքը բավարարել:
2. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչությանը.

Կատարել Ա/Ձ Մանվել Հովհաննիսյանի եկամտային հարկի պարտավորությունների վերահաշվարկ՝ անձնական հաշվի քարտից նվազեցնելով 57.696 դրամ:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ